


ՁԵՌՆԱՐԿ  
ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ

BECOMING THE MASTER  
OF YOUR OWN HOMELAND  
A GUIDE





Տեսարաններ Տավուշի մարզից  
Scenes from the region of Tavush



ՀՏԴ 372.8:941(479.25):502  
ԳՄԴ 74.263.1  
Կ 294

Կարապետյան Ս.  
Կ 294 Ձեռնարկ հայրենաստիքության / Ս. Կարապետյան, - Եր.: ՀՅՈՒՀ, 2013 - 12 էջ:

ՀՏԴ 372.8:941(479.25):502  
ԳՄԴ 74.263.1

ISBN 978-9939-843-10-0

© ՀՅՈՒՀ, 2013

Ինչպես զավակները ծնողների հանդեպ, այնպես էլ Երկիր մոլորակի վրա որևէ անկյուն զբաղեցրած յուրաքանչյուր մարդկային հասարակություն առաքելություն և պատվաբեր պարտականություն ունի խնամք և հոգ տանել այն հողակտորի մասին, որի իրավատերն է, և որը սնուցում և ապահովում է տվյալ հասարակության շարունակական զարգացումը:

Կյանքը ցույց է տվել, որ Երկիր մոլորակի վրա յուրաքանչյուր էթնոսին ի վերուստ որպես բնօրրան վերապահված տարածաշրջանների նկատմամբ ընդհանրապես առավել հոգածու են ազգային հասարակությունները, քանի որ նրանց մեջ քաղաքակրթորեն մշակված և ամրագրված քաղաքացիական պարտականությունների գիտակցմանը գումարվում են նաև հարազատ օրրանի՝ Հայրենիքի հանդեպ ունեցած

Like children who have the duty of looking after their parents, any community of people possessing their own parcel of land in a certain corner on the planet Earth has a mission and an honorary obligation to take care of it as its legal proprietor. In turn, a homeland provides its sons with vital nourishment and conditions for uninterrupted progress.

History has shown that this or that ethnic group treats its historical cradle with the utmost care and conscientious attitude only if its ideology is deeply national. In such cases, apart from the sense of civil duties, inculcated in people's minds as a general norm of civilisation, they are also instilled with sublime, immaculate love of their mother soil, their Homeland.



Տեսարաններ Լոռու մարզից  
Scenes from the region of Lori

անհուն սիրո վեհ ու անբասիր զգացումները:

Վերջիններս առավել խորությամբ կրում են ազգային հասարակություններից նրանք, ովքեր Հայրենիքին մատուցած մշտադրժուն հարկավոր զոհաբերություններով ապահովել են պետականության տևականություն, և որի գոյության պայմաններում և շնորհիվ էլ դարերի ընթացքում կարողացել են էլ ավելի դրսևորվել, ամրանալ և զարգանալ:

Մյուս կողմից ազգային այն հասարակությունները, որոնք պատմական անցքերի բերումով տևաբար զրկված են եղել սեփական պետականությունից և, ըստ այդմ, ենթակա այս կամ այն օտարամուտ ու անհարազատ, իսկ ավելի հաճախ պարզապես թշնամական տիրապետությունների պարտադրանքներին և կեղեքումներին,

This feeling is especially deeply rooted in those nations which ensured the incessant existence of statehood in their homeland at the cost of vital sacrifices: it is this very statehood that enables nations to manifest their features and qualities, at the same time strengthening their foothold and going ahead.

On the other hand, those nations which were continually stripped of statehood under various historical circumstances, being obliged to acknowledge the oppression and persecutions of this or that alien, or more frequently simply hostile, ruler, involuntarily suffered some extent of degradation and decadence in the course of time, this moral deterioration manifesting itself in a consump-





Տավուշի մարզի Բերդավան գյուղի դպրոցի սաների հետ  
 Together with the pupils of the school of Berdavan Village,  
 Tavush Region

իրենց կամքից անկախ ժամանակի ընթացքում այս կամ այն չափով ենթարկվել են այլասերման և վատասերման, որոնք էլ ընդհանրապես դրսևորվել են տվյալ հասարակության մեջ ձևավորված սպառողական կենցաղակերպով և անտարբերությամբ:

1990-ական թթ.-ից ի վեր, ինչպես նախկին խորհրդային ազգային հանրապետությունները, այնպես էլ որոշ ազգային ինքնավարություններ կարողացան վերագտնել և կամ նորինորո ստեղծել իրենց ազգային պետականությունները, և աշխարհընկալման քաղաքակրթական սեփական նորմերի համեմատ նրանցից յուրաքանչյուրը լծվեց իրականություն դարձած մշտաերազ ազգային պետության կառուցման և հզորացման գործին:

Ընդհանրության մեջ բացառություն չէր կարող կազմել նաև հայաստանյան հասարակությունը, որը նույնպես հայտնվել էր կուսակցական-քաղաքական գաղափարախոսությամբ հորինված նախկին «մեծ և ընդհանուր» հայրենիքի ավերակակույտի ներքո: Անկախությունը վերագտնելուց հետո մեր պետության հասարակության առջև ևս

tive mode of life and indifference to their homeland and national values.

Beginning with the 1990s, the former Soviet republics as well as certain national autonomies started restoring or founding their statehood. Each of them harnessed themselves to building and fortifying a national state; a dream that had finally come true; in accordance with their own world outlook and perception of norms of civilisation.

Like the other post-Soviet peoples, the Armenians found themselves amidst the ruins of the former “large and common” motherland, the foundations of which used to rest on party-affiliated and politically-oriented ideology. Once the independence of the country was restored, they faced a number of ideological, psychological and educational problems on their path of remoulding the former indifferent citizen of the “common motherland” (as what belonged to “everybody” actually pertained to nobody) into one who would consider himself





Քերդավանի աշակերտների հետ Դովեղ գյուղի Սր.  
Սարգիս վանքը չափազրելու պահին  
Measuring St. Sargis Monastery of Dovegh Village together  
with the pupils of Berdavan



ծառայել էին «ընդհանուր հայրենիք»-ից ժառանգված անտարբեր քաղաքացուց (քանի որ ինչը «բոլորինն» էր, ոչ մեկինը չէր) սեփական Հայրենիքի բարօրությանը նախանձախնդիր հայրենատեր քաղաքացի վերակերտելու գաղափարահոգեբանական և կրթադաստիարակչական խնդիրները, որոնք առաջին հերթին նշանակում էին կրթական զանազան ծրագրերի միջոցով վերաորակավորել անկախ Հայրենիքին արժանի և նրա հարգն իմացող քաղաքացի, այսինքն՝ նախկին անտարբեր քաղաքացուց վերակերտել և արմատավորել ոչ միայն, օրինակ, սեփական Հայրենիքի մաքրության, նրա բնության և բնական հարստությունների, կենդանական աշխարհի պահպանության խնդիրների հանդեպ նախանձախնդիր, ավելի հոգատար, սրտացավ, պատվասեր և գործունյա հասարակություն, այլև փորձել բարեփոխել մարդկային հարաբերություններում առկա նախկին հասարակարգից ավանդված արժեքային համակարգը, որտեղ գերիշխող ու առօրեական էին ոչ թե մարդկային անհատականության արժևորումն ու հարգանքը, այլ

the master of his own homeland, ever striving to build prosperity there. Only various educational programmes could help achieve the goal of re-educating citizens deserving an independent homeland and appreciating its importance. In other words, the former unconcerned citizens had to be reformed into a noble, more caring, conscientious, resolute and active society that would intensely care for the cleanliness of its own homeland, ever anxious about the preservation of its natural world, resources and fauna. Moreover, it also became of the utmost necessity to review and improve the system of values inherited from the former regime that acknowledged not mutual understanding but subjugation under various acts of compulsion, attaching significance not to the appreciation and respect of individuality, but to its suppression through the violation of dignity, by special means of pressure well-mastered by the ruling party. In consequence of all this, the Armenian soci-



արժանապատվության ոտնահարմամբ կուսակցական մամլիչին ենթարկելը, ոչ թե փոխըմբռնումը, այլ վախի ներգործությամբ հպատակեցնելը:

Այս ամենի հետևանքով և արդյունքում գոնե հայաստանյան հասարակության մեջ (լայն հաշվով սա բնորոշում էր ողջ խորհրդային հասարակությանը) ակնհայտորեն նվազել էին բարությունը, միմյանց նկատմամբ կամեցողությունը, և գլուխ էին բարձրացրել նախանձն ու չարությունը:

Ինքնին հասկանալի է, որ տևական ժամանակահատվածում որևէ հասարակության ընդունած արժեքային համակարգերը քաղաքակրթական փոփոխությունների ենթարկելը դյուրին գործ չէ: Այդօրինակ գործընթացները անվերապահորեն պահանջում են խիստ կշռադատված, համբերատար և նպատակամղված գաղափարադատիարակչական աշխատանք, իսկ ակնկալվող արդյունքների համար՝ որոշակի ժամանակահատված:

Տուրք տալով կարծրացած ըմբռնումներին և մտայնություններին՝ մեզանում սովորաբար սպասվում է, որ ազգային-պետական նշանակության ծրագրերը հղացվեն և իրագործվեն


ety had almost forgotten about kindness and benevolence during the Soviet years, and instead, everybody's minds were permeated with envy and malice (generally speaking, this was true of all the Soviet peoples).

It goes without saying that a system of values adopted and practised for rather a long period of time cannot easily go through modifications in accordance with norms of civilisation. Such processes require patient, well-weighted and purposeful ideological and educational efforts which certainly take some time to yield the expected results.

According to some stereotyped thinking, it is the state bodies which are mainly expected to work out and implement programmes of state and national importance. However, it is evident that their work is confined to the framework of certain routine plans of action, as a result of which, they are often unable to become torch-bearers of new ideas. Therefore, a lot of issues of public importance should be voiced



Տավուշի մարզի Վարագավան գյուղի սաների հետ Հին Հայխում գյուղատեղիում և Վարագավանքում  
In Hin Hakhum Village Site and Varag Monastery together with the pupils of Varagavan Village, Tavush Region



Հանդիպում Տավուշի մարզի Վարագավան գյուղի սաների հետ և հատվածներ գյուղամերձ հուշարձաններից  
A meeting with the pupils of Varagavan Village, Tavush Region, and partial views of the monuments of its neighbourhood

պետական կառույցների միջոցով: Սակայն ակներև է, որ վերջիններս կաշկանդված ծրագրային դրույթներով հաճախ պարզապես ի գորու չեն ստանձնելու նոր գաղափարների ջահակրությունը, ուստի մնում է, որ հասարակական հնչելության շատ աշխատանքներ առաջ մղվեն հենց հասարակական ուժերով:

Ուրվագծելով քաղաքակրթական բարեփոխումների բազմաթիվ աշխատանքային ծրագիրը՝ մեզ համար հստակ է, որ իրականացվելիք աշխատանքների հիմքում առանցքային պետք է լինեն հայրենաճանաչության խորացմանը նպաստող ձեռնարկները, իսկ ուսումնառող շրջանակներում ընդգրկվեն միջին և բարձր դասարանների աշակերտները: Ի վերջո, անվիճելի ճշմարտություն է, որ մարդը ճանաչողությամբ է կապվում, սիրում, նվիրվում, ուստի, որպեսզի գոնե վաղը մեր երկրում ևս իրապես ունենանք հայրենասեր հասարակություն, այսօր պարտավոր ենք նրանց մատաղ տարիքում ընձեռել Հայրենիքը ճանաչելու հնարավորություն: Ընդ որում, մշտապես պետք է հիշել, որ հայրենասիրությունը երբևէ կոչերով չի սերմանվում, այլ

and settled right with the efforts of the public at large.

When outlining a multi-step plan of actions aimed at civilisational reforms, we clearly see that the work to be carried out should be focused on efforts fostering cognizance and knowledge of our Homeland, being first and foremost implemented amidst pupils of middle and senior classes. It is indisputable that in order to grow attached and devoted to one's native soil, one should be familiar with it and its heritage; therefore, in order to have a patriotic society in Armenia at least in the future, we are simply obliged to give the younger generation a chance to get acquainted with their Homeland. It should always be borne in mind that patriotism is never infused through slogans and appeals, but only and only through cognizance. For this reason, it is of the utmost importance to our future citizens to see, feel and get into contact with the natural world of their Homeland while still schoolchildren,




միայն ու միայն ճանաչողությամբ: Ահա թե ինչու է այդքան կարևոր, որ վաղվա մեր հասարակության անդամն այսօր, հենց դպրոցական տարիքում արշավների մասնակցելով, տեսնի հայրենի բնությունը, շփվի, զգա այն, այցելի պատմական հուշարձաններ, մասնակցի թե՛ դրանց որմերում աճած խոտն ու թուփը քաղել-մաքրելուն և թե՛ գոնե հնավայրերի տարածքից կենցաղային աղբի հավաքման-մաքրման գործին, որի պակասը, ի դեպ, ցավալիորեն չի զգացվում մեր Հայրենիքի ողջ տարածքում: Այս ամենին զուգակցելով հայրենագիտական և բնապահպանական թեմաներով դասախոսությունների շարքը՝ կարծում ենք, որ այսօր կարելի է կերտել վաղվա ցանկալի հայրենաստեր հասարակությունը, քանի որ աղբ չի թափի նա, ով աղբ է հավաքել, հուշարձան չի փչացնի նա (օրինակ՝ անուրը որմերին գրոտել), ով մի ժամանակ դժվարությամբ մաքրել է ուրիշների գրածը և այլն:

Մտահոգ վերը շարադրված խնդիրներով՝ մեր հիմնադրամն ուրախությամբ ստանձնեց մասնակցությունը Եվրոմիության «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՀՔ)

by participating in different expeditions and visiting historical monuments, helping pick out the grass and bushes growing in their walls and removing the garbage and waste materials from their grounds (regretful as it is, we cannot complain of their shortage throughout our Homeland). If we carry out all this parallel with series of lectures on the Armenian Homeland and the preservation of its natural world, we can succeed in rearing citizens with a full sense of being the proprietors of their Homeland as those who gathered waste materials will not scatter rubbish here and there; those who once removed daubs and scribbles from the walls of monuments with difficulty will not spoil them themselves.

Ever concerned about the aforementioned problems, Research on Armenian Architecture (RAA) Foundation willingly consented to participate in the SOS Culture project, which was triggered in 2012 for a term of 24 months within the framework of



Հատվածներ Ախտալայի վանքից  
Partial views of Akhtala Monastery





Հատվածներ Ախթալայի մայր եկեղեցու ներքին ծավալներից և հանդիպում Ախթալայի թիվ 1 դպրոցի աշակերտության հետ  
 Partial views of the interior of the main church of Akhtala and a meeting with the pupils of Akhtala School No. 1

շրջանակներում 2012 թ. 24 ամիս տևողությամբ կյանքի կոչված «SOS մշակույթ» ծրագրին, որի՝ «Հատելով սահմանները՝ պահիր, պահպանիր, խնամիր» կարգախոսի ներքո հնարավորություն ընձեռվեց Հայաստանի Հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան շրջանների մի քանի բնակավայրերի հանրակրթական չորս դպրոցներում ձևավորված ակումբների աշակերտության մասնակցությամբ իրականացնելու հայրենագիտական բովանդակությամբ բազմաթիվ հանդիպումներ, ինչպես նաև համատեղ արշավներ դեպի իրենց իսկ բնակավայրերի մերձավորությամբ գտնվող պատմական հուշարձաններ, որի ընթացքում դպրոցականները ծանոթացան տվյալ հուշարձանի պատմությանը և ձեռք բերեցին միջնադարյան վիճագրեր վերծանելու որոշակի գիտելիքներ: Աշակերտները նաև իրենց մասնակցությունը բերեցին մի շարք հուշարձանների չափագրման, ինչպես նաև հնավայրերի տարածքների մաքրման աշխատանքներին:

Ամփոփելով ցանկանում ենք ուշադրություն հրավիրել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գոր-

the European Neighbourhood Policy (ENP) of the European Union. “Crossing borders to save, preserve and care”: with this motto guiding us, we held numerous meetings aimed at homeland cognizance with the pupils of the clubs of four public schools in several places in the north and north-east of the Republic of Armenia. Together we also went on expeditions to the historical monuments located in the neighbourhood of their own places of living: they got acquainted with the history of these sites and acquired certain skills for deciphering medieval inscriptions. The pupils also took part in the measurement of a number of monuments and the cleaning activities carried out in the grounds of some others.

To summarise, we would like to underline the fact that the Republic of Armenia has over 1,500 functioning public schools whereas the SOS Culture project involves the pupils of only 4 of them (in Alaverdi and Akhtala Towns as well as Berdavan




ծում են շուրջ 1500 հանրակրթական դպրոցներ, իսկ «SOS մշակույթ»-ն իր կրթական ծրագրերին կարողացավ մասնակից դարձնել միայն 4 դպրոցներում (Ալավերդի և Ախթալա քաղաքներ, Բերդավան և Վարագավան գյուղեր) ստեղծված ակումբների աշակերտությանը: Մինչդեռ համանման ծրագրերն անհրաժեշտ է գործադրել բոլոր կրթօջախներում: Սա արդեն պետական հոգածության խնդիր է:

ՀՃՈՒԻ հիմնադրամի նախագահ  
Սամվել Կարապետյան

and Varagavan Villages). In fact, such programmes should be implemented in all educational establishments, something that ought to be carried out at state level.

Samvel Karapetian  
Director of RAA Foundation



Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Արհեստագործական ուսումնարանի սաների հետ  
With the pupils of the Crafts College of Alaverdi City, Lori Region



Մանսհինի վանքը և կամուրջը  
The monastery and bridge of Sanahin





Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) «SOS մշակույթ» ծրագիրը, որը կյանքի է կոչվել 2012 թ. (24 ամիս տևողությամբ) Եվրոմիության «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՂՔ) շրջանակներում, նպատակ ունի համայնքային ուժերի ներգրավվածությամբ ճանաչելի դարձնելու և արժևորելու Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններում պահպանված պաշտամունքային և աշխարհիկ բնույթի պատմական հուշարձանները՝ կիսավեր և մոռացված բերդեր և ամրոցներ, վանքեր, եկեղեցիներ և մատուռներ, միջնադարյան բնակատեղիներ, քարանձավ-կացարաններ, գերեզմանոցներ և այլն, որոնցից շատերն անտեսված են և խնամքի, ուշադրության կարիք ունեն:

«Հատելով սահմանները՝ պահիր, պահպանիր, խնամիր» կարգախոսով «SOS մշակույթ» ծրագիրն իրականացվում է Արևելյան մշակութային գործընկերության ֆինանսավորմամբ, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈԻՀ) և dvv international կազմակերպության Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցությամբ:

«SOS մշակույթ»-ը գտնում է, որ պատմական արժեքների պահպանումն ու ուսումնասիրությունը խթանում են հեռավոր շրջաններում զբոսաշրջության զարգացումը:

«SOS մշակույթ»-ը կարևորում է մշակութային արժեքների ուսումնասիրման աշխատանքներին և դրանց պահպանման միջոցառումներին Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազգ երիտասարդության ներգրավումը:

Վստահ ենք, որ հայրենաճանաչությանն առնչվող գիտելիքների խորացումը կնպաստի ապագայի առավել հոգատար քաղաքացու ձևավորմանը:

The SOS Culture Project of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) was triggered in 2012 for a 24-month period within the framework of the European Neighbourhood Policy (ENP) of the European Union. It pursues the aim of raising awareness of, and evaluating the wide variety of, religious and secular monuments (semi-ruined and forgotten castles and fortresses, churches, chapels and monasteries, medieval sites, cave dwellings, cemeteries, etc.) preserved in the border regions of the Republics of Armenia and Georgia with the involvement of community members (this heritage is mostly consigned to neglect and needs proper attention).

“Crossing borders to save, preserve and care”: this is the slogan of the SOS Culture Project, which is funded by the Eastern Partnership Culture Programme and has been implemented in collaboration with Research on Armenian Architecture (RAA) Foundation and dvv international Georgia Country Office.

Those involved in the project are convinced that the preservation and studies of historical assets promote the development of tourism in remote regions. They attach much importance to the involvement of the youth of different nationalities living in the border regions of Armenia and Georgia in the events aimed at research into, and preservation of, cultural assets.

We believe that deep cognizance of one’s homeland and its heritage will make the coming generations more caring, fostering their sense of responsibility.

«SOS մշակույթ» ծրագիրն իրականացվել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի և դվվ ինթերնեյշնլ վրասանյան մասնաճյուղի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական միությունը:

SOS Culture Project is implemented by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) in cooperation with dvv international Georgia Country Office and Research on Armenian Architecture (RAA) Foundation. The project is funded by the European Union.



EUROEAST  
CULTURE



Այս տղազրության բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:  
The views expressed in this publication do not necessarily reflect the views of the European Union.